



ՎԱՆԱԶՈՐԻ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ

2015թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

10.12.2015թ




Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության նպատակն է նպաստել շրջակա միջավայրի լավ կառավարման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրմանը՝ Կենտրոնի միջոցով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, տեղական և ազգային մակարդակներում աջակցելով ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար չափազանց կարևոր է հանրության պատշաճ մասնակցությունը որոշումների կայացմանը, որը բնապահպանական լավ կառավարման, տեղական մակարդակում ժողովրդավարության հաստատման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրման առանցքային հարցն է և պատահական չէ, որ դրան են ուղղված Օրհուսի կոնվենցիայի մյուս երկու սկզբունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Օրհուս կենտրոնների առաքելությունն է՝ աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը համատեղ ուժերով լուծել բնապահպանական հիմնախնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները, գործունեության իրականացման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը: Կենտրոնը հարթակ է հանդիսանում պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ հանդիպելու, քննարկելու, տեղեկատվություն փոխանակելու, շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու և լուծման ուղիներ գտնելու համար: Հաշվի առնելով, որ միայն հասարակության իրազեկումը այս կամ այն նախագծի վերաբերյալ, դեռևս բավարար չէ հանրության ակտիվ մասնակցություն ապահովելու համար, առավել ուշադրություն ենք դարձրել շրջակա միջավայրում նախատեսված գործողությունների արդյունքում սպասվելիք փոփոխությունների վերաբերյալ հանրությանը նախապես իրազեկելու, ամբողջական տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ տարվող աշխատանքներին, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ու այլընտրանքային առաջարկությունների համատեղ մշակմանը:

Ստորև ներկայացվում է կենտրոնի իրականացված միջոցառումները.

Հ/Հ	Իրականացված միջոցառումները	Նպատակը և արդյունքները
1.	<p>Մասնակցություն Վանաձոր-Ալավերդի բարձրավոլտ էլեկտրական գծի կառուցման հանրային լսումներին:</p> 	<p>Տեղեկատվության մատչելիություն, որոշումների ընդունմանը մասնակցություն, կենտրոնում տեղեկատվության համալրում, տեղեկատվության հասանելիություն</p>
2.	<p>Աջակցություն <<Հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին. Հիմնախնդիրներ և հեռանկարներ>> թեմայով դասընթացի կազմակերպմանը և մասնակցություն:</p> 	<p>Աջակցել Վանաձորում իրականացվող դասընթացի իրականացմանը, մասնակցել դասընթացին, բարձրացնել տեղեկացվածության մակարդակը</p> 
3.	<p>Կազմակերպման աջակցություն և մասնակցություն <<Հանքարդյունաբերության ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով>> իրազեկության բարձրացման</p>	<p>Արդյունավետ համագործակցության ապահովում, Կենտրոնի առաքելության իրականացում: Տեղեկատվության մատչելիություն, որոշումների ընդունմանը մասնակցություն,</p>

	հանդիպմանը:	կենտրոնում տեղեկատվության համայրում
4.	<p>Հարցազրույց Երկիր մեդիա հեռուստարձկերությանը՝ Հանքարդյունաբերության սոցիալակ և բնապահպանական ազդեցությունը թեմայով:</p>	<p>Կարևորել շրջակա միջավայրի պահպանությունը, ներկայացնել համաշխարհային օրվա պատմությունը և թեման, տեղեկատվություն տրամադրել էկո խնդիրների վերաբերյալ: Ապահովել տեղեկատվության մատչելիություն: Արդյունավետ համագործակցություն ՋԼՄ-ների հետ</p>
5.	<p>Մասնակություն հզորացված ՔՀԿ-ներ հանուն կայուն բնապահպանության ծրագրի շրջանակում իրականացված <<Բաց տարածք>> բնապահպանական քննարկմանը</p> 	<p>Բնապահպանական խնդիրների քննարկում, տեղեկատվության փոխանակում, համագործակցություն մարզային և պետական իշխանության ներկայացուցիչների, լրագրողներ ՔՀԿ-ների հետ:</p> 
6.	<p>Կազմակերպման աջակցություն և մասնակցություն <<Հանքարդյունաբերության ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով>> իրազեկության բարձրացման հանդիպմանը:</p>	<p>Ստանալ տեղեկատվություն և առաջացած հարցերի պատասխաններ հետագա գործունեության բարձր որակ ապահովելու համար: Տեղեկատվության մատչելիության ապահովում, աջակցություն որոշումների ընդունման գործընթացին:</p>
7.	<p><<Ֆորտունա>> մարզային հեռուստարձկերության հրավերով Շրջակա միջավայրի համաշխարհային օրվան նվիրված հաղորդմանը մասնակցություն https://www.youtube.com/watch?v=P_tYoJ_GeqBM&feature=share</p>	<p>Տեղեկատվության մատչելիություն, վերլուծության իրականացում և հաղորդում հեռուստադիտողներին:</p>

8.	<p>Շրջակա միջավայրի համաշխարհային օրվան նվիրված դասընթաց <<Շողեր>> սոցիալական կենտրոնի սաների համար :</p>	<p>Կարևորել շրջակա միջավայրի պահպանությունը, ներկայացնել համաշխարհային օրվա պատմությունը և թեման, տեղեկատվություն տրամադրել էկո խնդիրների երաբերյալ: Էկոկրթություն</p>
9.	<p>Մասնակցություն Վանաձոր - Ալավերդի բարձրավոլտ էլեկտրագծերի կառուցման 2-րդ հանրային լսմանը:</p> 	<p>Մասնակցություն որոշումների ընդունման գործընթացին, տեղեկատվության մատչելիություն</p>
10.	<p>Կազմակերպման աջակցություն և մասնակցություն <<Կեղտաջրերի մաքրման այրնտրանքային մոտեցումներ>> մարզային սեմինարին</p> 	<p>Կեղտաջրերի մաքրման հիմնախնդիրների, դրանց լուծման հնարավոր տարբերակների և փորձի ներկայացում: Հիմնախնդիրների և առաջարկությունների քննարկում:</p> 
11.	<p>Մասնակցություն <<Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն>> թրեյնինգին:</p>	<p>ՌԱՄԱ գործընթացի ուսումնասիրություն, մասնագիտացում, էկոկրթություն</p>

12.	Վանաձոր Քիմպրոմ ՓԲԸ կողմից արտանետումների վերաբերյալ հարցում:	Տեղեկատվության մատչելիություն, համագործակցություն
13.	Վանաձոր Քիմպրոմ ՓԲԸ -ում տեղի ունեցած վթարների վերաբերյալ տեղեկատվության հարցում	Տեղեկատվության մատչելիություն, համագործակցություն
14.	Վանաձոր-Ալավերդի Վրաստանի սահման ավտոճանապարհի կառուցման հանրային լսումներին մասնակցություն:	Տեղեկատվության մատչելիություն, համագործակցություն
15.	<p>Աջակցություն Road Show ծրագրի կազմակերպմանը: Մասնակցություն Լոռու մարզի Շնող, Շավլուղ, Օձուն, Եղեգնուտ, Գարգառ համայնքներում անտառների կառավարման, պահպանության, օրենսդրության վերաբերյալ քննարկումներին:</p>  	<p>Մասնակցություն որոշումների ընդունմանը, տեղեկատվության մատչելիություն, համագործակցություն</p>  
16.	Վրո սեղան քննարկում <<Վանաձոր քաղաքի խոցելիության և կարողությունների գնահատում աղետների նկատմամբ>> մասնակցություն, տեղեկատվության տրամադրում:	Համագործակցություն, աջակցություն ՀԿ-ներին, մասնակցություն որոշումների ընդունմանը, տեղեկատվության հասանելիության ապահովում

17.	<p>Հանդիպում ՀԿ ներկայացուցիչների հետ Արջուտում նախատեսվող ոսկու հարստացման ֆարրիկայի կառուցման և ոսկու հանքի շահագործման վերաբերյալ:</p>	<p>Մասնակցություն որոշումների ընդունմանը, տեղեկատվության մատչելիություն, համագործակցություն</p>
18.	<p>Մասնակցություն Օրհուս կենտրոնների աշխատանքային հանդիպմանը: Մասնակցություն թրեյնինգներին:</p>	<p>Մասնակցություն որոշումների ընդունմանը, տեղեկատվության մատչելիություն, համագործակցություն</p>
19.	<p>Հանդիպում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի փորձագետ Քրիս Հեյլիի և Վանաձորի Օրհուս կենտրոնի փորձագետների խորհրդի հետ:</p> 	<p>Աշխատանքների պլանավորում, հաշվետվություն, վանաձորի Օրհուս կենտրոնի հետագա գործունեության քննարկում:</p> 
20.	<p>Դասընթաց <Բնապահպանակն հիմնախնդիրները> Ջինիշյան հիշատակի հիմնադրամի երիտասարդական ծրագրային թիմի ներկայացուցիչների համար:</p>	<p>Էկոկրթություն, համագործակցություն երիտասարդների հետ, տեղեկատվության մատչելիություն</p>
21.	<p>Լոռու մարզի բնապահպանական հիմնախնդիրների քննարկում երիտասարդական ծրագրային թիմի հետ:</p> 	<p>Էկոկրթություն, համագործակցություն հլ-ների և երիտասարդների հետ, տեղեկատվության մատչելիություն:</p>

<p>22.</p>	<p>«Լոռու մարզի բնապահպանության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և դրա նկատմամբ հասարակական վերահսկողությունը» քննարկում: Ջեկույց “Կոռուպցիոն ռիսկերը Լոռու մարզի բնապահպանական ոլորտում”:</p> 	<p>Կոռուպցիոն ռիսկերի քննարկում, կոռուպցիա հասկացությունը բնապահպանական ոլորտում, տեղեկատվության մատչելիություն, փորձի փոխանակում:</p> 
------------	---	---

Վանաձորի Օրհուս կենտրոնը համագործակցել է հետևյալ կառույցների ներկայացուցիչների հետ.

Լոռու մարզպետարանի բնապահպանության և գյուղատնտեսության վարչություն, Վանաձորի քաղաքապետարան, Կովկասի ռեզիոնալ էկոլոգիական կենտրոն, Հայկական Կարմիր խաչի Լոռու մարզի մասնաճյուղ, Հայկական կանաչ խաչ ՀԿ, FLAG 2 ծրագիր, Լոռու մարզի Շամլուղ, Շնող, Եղեգնուտ, Գարգար, Օձուն համայնքների ղեկավարություն, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի Լոռու մարզի ՔՀԿ-ների խումբ, Լոռու մարզի Հակակոռուպցիոն կենտրոն, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Վանաձորի գրասենյակ, Շողեր սոցիալական կենտրոն, լրագրողներ:

Կենտրոնի գործունեությունն իրականացվել է Օրհուս կենտրոնների ճանապարհային քարտեզի նպատակներին իրականացմանը համահունչ և Օրհուս կենտրոնների համակարգողների Տեխնիկական հանձնարարականի համաձայն:

Պերճ Բոջուկյան

Համակարգող

Վանաձորի Օրհուս կենտրոն

Հեռ: 077723388

Էլ. Փոստ: info_vanadzor@aarhus.am